Հաշվետվությամբ գնահատական եմ դրական
08.09.2023թ.
Հ. Սարգսյան

ԳԳԿ վարչության գիտական փորձաքննության
կազմակերպման բաժնի պետ Հարություն Սարգսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնում հաշվետու ժամանակահատվածի երկրորդ եռամսյակում՝ 2023 թվականի հունիսի 10-ին սեպտեմբերի 10-ը, մասնակցել եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին՝ մրցույթների հրավերների ստուգում, հայտերի առցանց ընդունման կայքի պայմանների հստակեցում, կայքի համապատասխանությունը մրցույթի հրավերի պայմաններին, արձանագրությունների և զեկուցագրերի կազմում, պայմանագրերի ընդունում, այդ թվում նաև.

1. Կազմակերպել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2023» մրցույթին ստացված հայտերի գիտական փորձաքննությունը և հարցազրույցի փուլը:
2. Կազմել վերոնշյալ մրցույթի վարկանիշային ցանկը փորձաքննությունը և հարցազրույցի գնահատականների նվազման կարգով, ներկայացրել խորհրդին, պատրաստել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի (հուլիսի 12-ի N1078–Ա/2) ֆինանսավորման երաշխավորված հայտերի հրամանը, ֆինանսավորման զեկուցագրերը և ընդունել եմ ֆինանսավորման պայմանագրերը:
3. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2023/2» մրցույթի կազմակերպման աշխատանքներին, մասնավորապես՝ Հրավերի փաթեթի պատրաստում, կայքի ստեղծում, ստացված թվով 4 հայտերի վերլուծություն (ըստ հայտատուների տարիք, սեռ, ազգություն, ընդունող կազմակերպություն, մասնագիտական բնագավառ և այլն), մասնագիտական փորձագիտական խորհրդի կազմը հաստատելու հրամանի նախագծի պատրաստմանը:

4. Կազմակերպել եմ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթի մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստերը և փորձաքննությունը, որի ժամանակ խորհրդին տրամադրել եմ ներկայացված հայտերը, նրանց վերլուծությունը, խորհրդի հետ քննարկվել է փորձագետների գնահատման հարցաշարը:
5. Կազմակերպել եմ «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023» մրցույթի մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստերը և փորձաքննությունը, որի ժամանակ խորհրդին տրամադրել եմ ներկայացված հայտերը, նրանց վերլուծությունը, խորհրդի հետ քննարկվել է փորձագետների և հարցազրույցի գնահատման հարցաշարը, ինչպես նաև տվյալ մրցույթի հայտերի բնագավառներին վերաբերող արտերկրի փորձագետների լրամշակված ցանկը:

Գիտական փորձաքննության
կազմակերպման բաժնի փորձագետ Մարինա Տիմոտինա

8 սեպտեմբերի 2023 թ.